

ՀՀ ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 23/5

17 հոկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց քաղաքացի Հարություն Հովհաննիսյանի 22.09.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Էջմիածնի ՏՀՏ պետի 12.08.2014 թ-ի թիվ 387 որոշման դեմ:

Քաղաքացի Հարություն Հովհաննիսյանի գանգատում բերված փաստարկները.

Ա.թ. օգոստոսի 14-ին, փոստային առաքմամբ, Հարություն Հովհաննիսյանին (այսուհետ նաև գանգատաբեր) է հանձնվել ՀՀ ՖՆ Էջմիածնի տարածքային հարկային տեսչության պետի 12.08.2014 թ-ի թիվ 387 որոշումը (այսուհետ նաև Որոշում), որի եզրափակիչ մասի համաձայն վարչական մարմինը որոշել է ԱՁ Հարություն Հովհաննիսյանից գանձել 408.600 դրամ պարտավորության գումար:

Հարություն Հովհաննիսյանը գտնում է, որ Որոշումը ենթակա է անվավեր ճանաչման հետևյալ պատճառաբանությամբ.

Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրի կողմից 26.11.1997 թ-ի թիվ 01ԱՕ41850 վկայականի համաձայն Հարություն Հովհաննիսյանը ՀՀ պետական ռեգիստրում գրանցվել է որպես անհատ ձեռներեց: Որպես անհատ ձեռներեց հաշվառվելու պահից մոտ մեկ տարի զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ, որից հետո՝ 1998 թ-ի ընթացքում ներկայացրել է գրավոր հայտարարություն հաշվառման վայրի հարկային տեսչություն՝ անորոշ ժամկետով գործունեություն չիրականացնելու մասին: Նշված դիմումը ներկայացնելու պահից առ այսօր որևէ ձեռնարկատիրական գործունեություն չի իրականացրել: Գործունեություն չիրականացնելու մասին հայտարարությունը հաշվառման վայրի հարկային տեսչություն ներկայացնելու պահից շուրջ տասը տարուց ավելի որևէ ծանուցում չկատարված հարկային պարտավորությունների վերաբերյալ չի ստացվել:

Ա/Ձ Հարություն Հովհաննիսյանը պետք է հանվեր հաշվառումից «2008 թվականի հունվարի 1-ի դրությամբ հարկային հաշվետվություններ չներկայացրած կազմակերպությունները լուծարելու և անհատ ձեռնարկատերերին պետական հաշվառումից հանելու մասին» ՀՀ օրենքի (ընդունված է 26.05.2011թ.) հիման վրա, սակայն անհասկանալի պատճառով նշված օրենքը չի կիրառվել:

Հետագա քաջբշուկներից խուսափելու նպատակով գանգատաբերի կողմից դիմում է ներկայացվել ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստր և 22.08.2014 թ-ին Ա/Ձ Հարություն Հովհաննիսյանը հանվել է հաշվառումից:

Հարկ է նշել, որ վիճարկվող Որոշման պատճառաբանական մասում նշված է, որ ապառքի գումարներն առաջացել են 2009-2012 ընթացքում, մինչդեռ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի համաձայն՝ հարկային խախտումներ հայտնաբերելու դեպքում հարկային պարտավորություններ չեն կարող առաջանալ, եթե տվյալ խախտումը հայտնաբերվել է այն կատարելու տարվան անմիջապես հաջորդող երեք տարին լուսնալույց հետո: Այսինքն, բացի նրանից, որ գործունեություն չիրականացնելու ժամանակահատվածում հաշվարկվել են որոշակի հարկային

պարտավորություններ, դրանք հաշվարկվել են այն ժամանակահատվածի համար, որի հաճար «Հարկերի մասին» ՀՀ օրենքի 30.1 հոդվածի համաձայն չպետք է հաշվարկվեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածով գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Էջմիածնի տարածքային հարկային տեսչության պետի 12.08.2014 թ-ի թիվ 387 որոշումը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Էջմիածնի ՏՀՏ պետը, քննարկելով Ա/Ձ Հարություն Հովհաննիսյանի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը 12.08.2014 թ-ին ընդունել է թիվ 387 որոշումը (այսուհետ նաև Որոշում), համաձայն որի 30.07.2014 թ-ի դրությամբ Ա/Ձ Հարություն Հովհաննիսյանի չկատարված հարկային պարտավորությունները կազմում են ընդամենը 408.600 դրամ, որից սոցիալական վճարի ապառք 240.000 դրամ, տույժ 131.400 դրամ, հաստատագրված վճարի ապառք 20.900 դրամ, տույժ 16.300 դրամ: Սոցիալական վճարի գծով պարտավորությունները դրանք 2009 թ-ից մինչև 2012 թ. ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված նվազագույն սոցիալական ապահովության վճարներն են, իսկ հաստատագրված վճարի գծով պարտավորությունը հաշվարկվել է 1998 թ-ին հաստատագրված վճարի ելակետային տվյալների վերաբերյալ ներկայացված հայտարարությունների հիման վրա:

Նշվեց նաև, որ ՀՀ պետական ռեգիստրի կողմից 26.11.1997 թ-ին տրամադրված անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա041850 վկայականի համաձայն քաղաքացի Հարություն Հովհաննիսյանը գրանցված է ՀՀ պետական ռեգիստրում որպես անհատ ձեռներեց 21.11.1997 թ-ից: Ընդ որում, անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա041850 վկայականում նշված է, որ վկայականը ուժի մեջ է միայն ներդիրի հետ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով վերոգրյալ վկայականի 26.11.1997 թ-ի թիվ 01 ներդիրն արձանագրեց, որ վերջինիս համաձայն Ա/Ձ Հարություն Հովհաննիսյանի գործունեության ժամկետը սահմանված է մինչև 16.09.2000 թ-ը:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն. «Ֆիզիկական անձի, որպես անհատ ձեռնարկատիրոջ, իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական հաշվառման պահից և դադարում են այդ ֆիզիկական անձի իրավունակության կամ գործունակության դադարման, ինչպես նաև օրենքով նախատեսված դեպքերում պետական հաշվառումն ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու պահից»:

Քննարկվող դեպքում անհատ ձեռներեցի պետական գրանցման թիվ 01Ա041850 վկայականում, ինչպես նաև վկայականի ներդիրում կատարված գրառումների համաձայն, Ա/Ձ Հարություն Հովհաննիսյանը 16.09.2000 թ-ից դադարել է անհատ ձեռնարկատեր համարվել: Այսինքն, ըստ էության, դադարել են Հարություն

Հովհաննիսյանի որպես անհատ ձեռնարկատիրոջ իրավունակությունն ու գործունակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն, որ Ա/Ձ Հարություն Հովհաննիսյանի կողմից 14.04.1999 թ-ին հարկային մարմնին գրավոր հայտնվել է գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու վերաբերյալ և գործում առկա չէ որևէ ապացույց 14.04.1999 թ-ից հետո ընկած ժամանակահատվածում նրա կողմից գործունեություն իրականացնելու վերաբերյալ, Հանձնաժողովը գտնում է, որ Հարություն Հովհաննիսյան նկատմամբ 2009 թ-ից մինչև 2012 թ-ն ընկած ժամանակահատվածի համար նվազագույն սոցիալական ապահովության վճարների գծով պարտավորություններ չեն կարող հաշվարկվել:

Ինչ վերաբերվում է Որոշմամբ հաստատագրված վճարի գծով գանձման առաջադրված պարտավորությանը՝ գումարով 37.200 դրամ, ապա հաշվի առնելով, որ այն առաջացել է հարկային տեսչություն ներկայացված 1998 թ-ի հաստատագրված վճարի ելակետային տվյալների վերաբերյալ հայտարարությունների հիման վրա, այն Հարություն Հովհաննիսյանի կողմից ենթակա է վճարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Էջմիածնի ՏՀՏ պետի 12.08.2014 թ-ի թիվ 387 որոշմամբ գանձման առաջադրված 408.600 դրամ գումարից նվազեցնել 371.400 դրամ:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ